

# Շուշանիկ Կուրղինյան

## Բացվեց գարուն

Սրտիս հովտում կանաչագեղ
Բացվեց գարուն.
Ծաղկեց դալար, նազ սիրագեղ
Ծաղիկ սիրուն.
Աղբյուրն ունի հոզեզվարթ
Անուշ խորխոջ,
Հովն է սուլում դլարազարդ
Դաշտով անխոնջ.
Ցնորքներիս ջինջ եթերում
Վառ հոզեթով
Երազներիս աստղն է փայլում
Անմար ցոլքով:
Եվ երկնառաք իմ քնարի
Ոսկի լարեր,
Սեր են երգում կարոտ յարի—
Գիշեր աչեր:
Մութն է իջնում սրտիս հովտում . . .
Արշալույսին՝
Ոլորվում է երազներիս,
Երգեր հյուսում,
Վաղ խորշոմած վեհ իղձերիս
Խիստ ափսոսում:

Յատուկ Պոեմ

1907